

ԳԵՐԱՊԱՍԵՆՔ ԱՍՏՈՒԹԱՅԻՆԸ

Զինտոնենք մարդոց գովասանիքը, այլ՝ աստուածայինը, այլապէս նախատած կ'ըլլանք զԱստուած: Խօչպէս, որ պատիւի արժանի մարդիկը երբ տեսնեն եւ անարժաններ պատուեն, նախատած կ'ըլլանք առաջինները, նմանապէս անոնք, որոնք Աստուծոյ համար բարիք չեն գործեր, այլ՝ աւելի միայն մարդոցմէ գովասանք կը փնտոնեն, անարգած կ'ըլլան իրենց անձը:


Դարձեալ, մարդոց առջեւ չար գործեր կատարելէ կը վախնանք, իսկ Աստուծունէ երբեք չեն ակնածիր: Ո՞չ ո՞ք կ'ուզէ մարդոց կողմէ տեսնուելով պոռնկութիւն ընել, նոյնիսկ եթէ այդ ախտով սաստիկ տառապի, իսկ ամենատես Աստուծոյ առջեւ մարդիկ ո՞չ միայն կը շնան, այլ անհամար չար գործեր կը կատարեն:

Նախապատուութիւնը Աստուծոյ պէտք է տալ եւ ո՞չ թէ մարդոց: Ասիկա կրնանք ընել այն ատեն, երբ մտածենք, թէ ի՞նչ է մարդը եւ ի՞նչ է Աստուած: Մարդը նոյն մեղքին ենթակայ է եւ քու հետդ Քրիստոսի ատեանին պիտի ներկայանայ: Մարդը ոչնչութիւն է եւ իր կատարած դատաստանները ուղիղ չեն. կարօտ է երկնային օգնութիւն: Մարդը հող է եւ մոխիր, թէեւ գովէ իսկ, սակայն յանախ պարապ տեղ կը գովէ, այսինքն՝ կամ շնորիք մը ձեռք բերելու եւ կամ դիմացինը նախատելու համար, բայց Աստուծոյ մօտ նման բաներ չկայ, Անոր վճիռը նշմարիտ է:

Բարսեղ Մաշկեւորցի

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՅ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱԼԱՎՐԻ ԽՈՂՀՈՒԹԻՒՆ ՀՎԱՏԱՎՈՒՄ

2.-Պատրաստութիւն ընծաներուն

Գ.-ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ
ՀԱՏԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Խնդրանքները կը շարունակին, այս անգամ՝ սարկաւագի կողմէ Աստուծոյ ընծայուած զոհութեամբ եւ փառարանութեան խօսքերուն մէջէն, որոնք ջերմօրէն կը ներգրաւեն հաւատացեալներու սրտերը: Դարձեալ կը յիշատակուին հայոց հայրապետին եւ առաջնորդին անունները, որոնց այս անգամ կու գայ միանալու յիշատակումը քահանային, որ Ս. Պատարագը կը մատուցան:

Կը յիշատակուին զօրութիւններն ու յաղութիւնները քրիստոնեայ յանախ պարապ տեղ կը գովէ, այսինքն՝ կամ շնորիք մը ձեռք բերելու եւ կամ դիմացինը նախատելու համար, բայց Աստուծոյ մօտ նման բաներ չկայ, Անոր վճիռը նշմարիտ է:

Ես առաւել կը յիշատակուին հանգուցեալ հայրապետները եւ եկեղեցւոյ շինողները ...

Շարունակելի

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՂԻ ԲՐԱԳ Է ՈՒ ԽՎԱՐԻՆԵՐՈՂԻ ԼՈՅ
(Ա. 119.105)

Ժ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 8 ԴԵԿԵMBER 2024

ԹԻՒ 49

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԹԱՅՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 37.14-38: Ա. ԹԱ. 1.1-12: ՂԿ. 14.12-24

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՎՐԵՄԱՎԱՐԱՐ

ԸՆ ՊՈՐԿՎԱՐ 14.12-24

Ապա Յիսուս տանտիրոց ըսաւ. «Երբ նաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղրայրներդ, որպէսզի ըրլայ որ անոնք ալ քու հրաւերիդ փոխարէն քեզ հրաւերեն, եւ այս ձեւով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ աղբատմներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը հատուցանելիք ոչիմէ ունիմ: Եւ գիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքները լսեց, ըսաւ Յիսուսի. «Երանի՛ անոր, որ Աստուծոյ արքայութեան մէջ նաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոնց հետեւալ առակը պատմեց. Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարժեց եւ շատեր հրաւերեց: Ընթրիքի ժամուն իր ծառան որկեց որպէսզի հրաւերեալներուն ըսէ. «Եկ՛, ամէն ինչ պատրաստ է»: Հրաւերեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Ագարակ գմեցի: Պէտք է երքամ եւ տեսնեմ զայն, հետեւարար կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուի»: Միւսը ըսաւ. «Հինգ գոյգ եղ գնեցի: Պէտք է երքամ փորձեմ զանոնք, հետեւարար կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուի»: Ուրիշ մը ըսաւ. «Տակաւին նոր ամուսնացայ, հետեւարար չեմ կրնար գալ»: Ծառան վերադարձ եւ իր տիրոց պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. «Անմիջապէս բաղամ գնա՛ եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ ո՞րքան, որ աղբատ, խեղանդամ, կադ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հո՛ս բեր»: Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոց ըսաւ. «Տէ՛ր, հրամանէ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը ծառային հրամայեց. «Քաղաքէն դուրս գնա՛ եւ նամրաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՞վ որ գտնես, ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւերեալներէն ո՞չ մէկը ինձի հետ ընթրիքի պիտի նստի»:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Նիւոյ Արքեպիսկոպոս՝ որ Լի-կիոյ քաղաքն էր, Զմիւնիոյ մօտ: Որդին էր Եպիփան եւ նունէ անուն բարեպաշտ ծնողաց: Իր հրաշագործութիւն գրաւեց մանուկ հասակէն: Եպիփան ձեռնադրուած է իրեն համանուն եպիփան պոսէն՝ որ իր քեռին էր: Մասնակցած կը համարուի նիկիոյ ժողովին: Մանուկներու մասին տարած հոգածու սիրոյն համար, նկատուած է մանուկներու պաշտպան: «Սանթագլօզա» կոչումը ուսմկօրէն եւ մանկաբար խեղանաւուած կերպն է՝ իր անունին: Անձանօթ է իբրև ազատարար՝ նաւակոծելոց եւ կոչուած է Սբանչելագործ: Բարի մահով վախճանած է Դ. դարուն: Քանի մը դար ետք, իր նշխարները փոխադրուած են Խտալիոյ Պառի քաղաքը, ուր կայ մեծ տաճար մը՝ իր անուան նուիրուած:

ՄԻԱՄԱՆԱԲԱՐ ԱՂՈԹԵՆՔ

Ողորմէ՛, ՏՇ՛ր, մեր եղբայրներուն, ծնողներուն ու իմ արինակից մերձաւորներուս, կրօնաւորներուն ու միանձն ճգնաւորներուն: Անոնց, որոնք մեզի ողորմութիւն պարգևեցին եւ անոնք, որ յանձնարարեցին զիրենք յիշել մեր աղօքներուն մէջ: Ողորմէ՛, Բարերա՛ր, եւ տո՛ր իւրաքանչիրին կարիքին համաձայն: Առատապէս բաշխէ՛ Սուրբ Հոգիիդ շնորհքները բոլոր անոնց եւ զարդարլ' ու միացն' լու Աստուածութեան:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱԽՍԱՆ

Կիրակի օրը Եկեղեցի երթա՞մ, թէ՞ տուն՝ իմ սենեակս աղօթեն: Այդ մէկը բաւարա՞ր է ինծի համար

Վարդան Վարդապետ Այգեկցի կ'ըսէ. Քրիստոս աղօթողին այսպէս հրահանգեց. «Քու սենեակը մտի՛ր եւ փակէ՛ քու դոներդ, եւ գաղտուկ աղօթք ըրէ՛ քու Հօրդ» (*Մատթէոս 6.6*): Այստեղ մարմիթը եւ սիրտը սենեակ կը կոչէ եւ կը պատուիրէ մարմնական ամէն խորհուրդ՝ աղօթքի ժամանակ մտքէն հեռացնել:

Քրիստոնեայ ժողովուրդէն մէկը, երբ լսէ եկեղեցւոյ զանգին ձայնը՝ գիշերթէ ցերեկ ատեն, մանաւանդ կիրակի օրը, որ տէրունական օր է, եւ եկեղեցւոյ՝ երկինքի արքայութեան դուռը չ'երթար, բահանան չի տեսներ, ու չի լսեր Աստուծոյ պատուիրաններուն հրամանը՝ պիտի չտեսնէ փառաց Տէրը բազմած՝ բառակերպ կենդանիներուն վրայ: Ուստի, ան որ կիրակի օրը չի տեսներ եկեղեցականը եւ չի խոստովանիր իր յանցանեները, Աստուծոյ փրկութիւնը պիտի չունենայ:

Վարդան Վրդ Այգեկցի

Ա.Ռ.Ա.Կ

Խրատ առէք եւ ոչ թէ արծար, գիտութիւն՝ բան թէ ընտիր ոսկի: Խմաստութիւնը աւելի կ'արժէ բան գոհարեղինները եւ ոչ մէկ բանկարժէք բան կընայ հաւասարիլ անոր:

Ես՝ խմաստութիւնս, բնակեցայ խոհեմութեան մէջ եւ իւրացուցի մտածորութիւնն ու գիտութիւնը:

Աստուածավախ մարդը կ'ատէ անիրաւութիւնը, թշնամութիւնը, հպարտութիւնն ու չարագործութիւնը:

**ՀՈԳԵՒՈՐ
ԴԱՍ ԳԱՍ**

ՅՇԵՆՔ, ՈՐ ԱՍՏՈՒԳԾ ՄԵՐ Է, ԲԱՅՑ

ՉՄՈՌԱԾԱՔ, ՈՐ ՆԱՅԵՒ ԱՐՄԱՐ Է

Նախորդ բաժնին մէջ խօսեցայ «սխալ ուսուցում» հասկացողութեան մասին: Սխալ ուսուցումը Աստուծաշնչական ճշմարտութիւնները այլափոխելը չէ միայն: Սխալ ուսուցումը կը նկատուի այն ուսուցումը երբ ամբողջ շեշտը ճշմարտութեան մէկ երեսին վրայ միայն կը դնէ: Օրինակ, երբ քարոզիչ մը մնայուն կերպով կը խօսի Աստուծոյ սիրոյն մասին եւ սակայն բնաւ շանդրադառնար Աստուծոյ արդար ըլլալուն մասին, զինք ունկնդրողները կրնան իրենց ամբողջ յոյսը դնել Աստուծոյ սիրոյն վրայ եւ ճիգ չքափել նորոգուած կեանք ապրելու: Եթէ երբեք կան քարոզիչներ, որոնք ժողովուրդը սիրաշահելու համար միշտ դրական բաներու մասին կը խօսին, կան նաև քարոզիչներ, որոնց քարոզները միշտ ու միայն քննադատական եւ դատողական են: Քարոզի այս երկու կերպերն ալ հաւասարապէս կործանարար են:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ
ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ**

Լաւ է միշտ յիշել, որ Աստուծ սէր է, բայց նաև պէտք չէ մոռնալ, որ Աստուծ արդար է եւ արդարութիւն պահանջող:

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ Կ'ՈՒՁԵՍ...

**ԵԹԵ ԿՈՒԶԵՍ ԳԻՏԱՎԱ ՔՐԻՍՏՈՒ
ԱՍՎԱԾԱԿԱՆ ԹՎԱՎՐՈՐՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ, ԿԱՐԴԱՎ ՍԱԼՄՈՆ 72**

Ո՛վ Աստուծած թագաւորին յանձնէ դատաստաններդ, արքայորդիին յանձնէ արդարութեանդ գործադրութիւնը, որպէսպի արդարութեամբ դատէ քու ժողովուրդի, քեզի համար տառապողներուն իրաւունքը վերահաստատէ: Թող լեռները ժողովուրդիդ բարօրութիւն ընծայեն, բլուրները արդարութիւն պարգևեւն: Թող թագաւորը ժողովուրդին աղքատներուն դատը պաշտպանէ, ազատագրէ չքաւորները, եւ ճկմէ զանոնք հարստահարողները: Թող ապրի այնքան՝ որբան ատեն կը մնան արեւը եւ լուսինը, սերունդէ սերունդ: Անձրեւի պէս թող իշնէ արտերուն վրայ, տարափներու պէս ոռոգէ երկիրը: Իր օրերով՝ արդարութիւնը թող ծաղկի, եւ առատանայ բարօրութիւնը, որբան ատեն, որ կը մնայ լուսինը: Թող անիկս տիրակալէ ծովէ ծով, գետէն սկսեալ մինչեւ երկիրն ծայրերը: անոր առջեւ պիտի խոնարհին անապատին բնակիչները, թշնամիները անոր առջեւ հողը պիտի համբուրեն: Սպանիայի եւ Միջերկրական ծովը եկերող երկիրներուն թագաւորները անոր տուրք պիտի տան, Արաբիայի ու Սաքայի թագաւորները անոր ընծայ պիտի բերեն: Բոլոր թագաւորները անոր առջեւ պիտի խոնարհին, բոլոր ազգերը անոր պիտի ենթարկուին: Որովհետեւ անիկս հարստահարողին ձեռքէն կ'ապատէ չքաւորները, աղքատն ու անօգնականը: